Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք.Երևան 19.01.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Ա.Մարգարյանի
մասնակցությամբ անդամներ՝
Լ.Աբգարյանի
Ա.Վարդանյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քրեական մասնագիտացման դատավորների թեկնածուների ցուցակի արտահերթ համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Բողոքարկվել են տարբերակ 9-ի **քրեական իրավունքի բաժնի** 8-րդ և 13-րդ, հարցերը:

Հարց 8

Վիճարկման արդյունքում գնահատականը թողնվել է անփոփոխ, հնարավոր պատասխաններից հավակնորդն ընտրել է այն, որը որպես հանցակազմ նախատեսված չէ, մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքում գոյություն չունի շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով սպանության սպառնալիք հանցակազմը:

Հարց 13

Վիճարկման արդյունքում գնահատականը թողնվել է անփոփոխ, քանի որ Հավակնորդի բերած հիմնավորումները ընդունել չեն. հանցանքը համարվում է խմբի կողմից կատարված, եթե դրանց մասնակցել են երկու կամ ավելի համակատարողներ: Խնդրում հավակնորդը սուբյեկտներից մեկին դիտարկել է որպես կատարող, մյուսին՝ օժանդակող, որի պայմաններում բացառվում է արարքը խմբի կողմից կատարված լինելու հնարավորությունը: Ավելին, հատուկ սուբյեկտով հանցագործություններում հանցանքը համարվում է խմբի կողմից կատարված, եթե դրան մասնակցել են

այդ հոդվածի իմաստով հատուկ սուբյեկտ հանդիսացող երկու կամ ավելի համակատարողներ, ինչը նշված խնդրում բացակայում է:

Բողոքարկվել են **քրեական դատավարություն բաժնի** 20-րդ, 38-րդ և 2-րդ հարցերը:

Հարց 20

Հավակնորդի հիմնավորումները հակասում են ՀՀ վճռաբեկ դատարանի ձևավորած իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ տվյալ իրավիճակում քրեական հետապնդումը ենթակա էր դադարեցման արդարացնող հիմքով՝ հանցադեպի բացակայության պատճառաբանությամբ:

Հարց 38

Հավակնորդի հիմնավորումները հակասում են ՀՀ վճռաբեկ դատարանի ձևավորած իրավական դիրքորոշմանը, ավելին՝ նման մոտեցման դեպքում գործը կհայտնվի անդադար շրջապտույտի մեջ՝ հանգեցնելով ողջամիտ ժամկետներում գործը քննելու իրավունքի խախտման:

Հարց 2

Հավակնորդի հիմնավորումները հակասում են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի ձևավորած իրավական դիրքորոշումներին, առավել ևս՝ հակընդդեմ հարցմամբ չապահովված վկայի ցուցմունքը նրա մահանալու փաստարկով չի կարող անարժանահավատ դառնալ:

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ 2017 ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը մերժել:

Քրեական իրավունքի բաժնի հարցերից հավակնորդը իրավաչափորեն ստացել է 24 միավոր, իսկ քրեական դատավարության բաժնից՝ 26 միավոր:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ա.ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ **Լ.ԱԲԳԱՐՅԱՆ**

Ա.ՎԱՐԴԱՆՅԱՆ